ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Իրավաբանական վարչության պետական շահերի պաշտպանության բաժնի գլխավոր իրավաբան Արևիկ Մարտիրոսյան

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ղազախստանի Հանրապետություն, քաղաք Ալմաթի, հոկտեմբերի 19-ից մինչև հոկտեմբերի 25-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը.

Արժույթի միջազգային հիմնադրամի Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն (CCAMTAC)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր Արժույթի միջազգային հիմնադրամի Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոնի (CCAMTAC) կողմից կազմակերպվող «Կոռուպցիայի հակազդումը, որը ազդում է մակրոտնտեսական հարցերի վրա» թեմայով տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցությունը: Աշխատաժողովի նպատակն էր կազմակերպվող «Կոռուպցիայի հակազդումը, որը ազդում է մակրոտնտեսական հարցերի վրա» թեմայի շրջանակներում ձեռքբերված գիտելիքների ու փորձի փոխանակումը, նոր գիտելիքների ու միջազգային փորձի ձեռքբերումը, ինչպես նաև ծանոթություն կոռուպցիայի դեմ պայքարի հիմունքների, կոռուպցիայի հիմնական հասկացությունների և հիմնարար սկզբունքների հետ, որոնք պետք է ընկած լինեն հակակոռուպցիոն արդյունավետ ռազմավարությունների, նորմատիվ իրավական ակտերի հիմքում:

5. Քննարկված թեմաները.

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները՝

1) Արժույթի միջազգային հիմնադրամի մոտեցումը կոռուպցիայի հակազդմանը և կառավարմանը,

2) Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ հակազդման միջոցների պլանավորումը,

3) Իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումները՝ որպես կոռուցիայի դեմ պայքարի մեթոդների մաս,

4) Հակակոռուպցիոն բարեփոխումների համար փարածության ստեղծումը:

Աշխատաժողովի ընթացքում իրականացվել է նաև չորս մոդուլից բաղկացած գործի քննարկում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Աշխատաժողովի ընթացքում տեղի են ունեցել քննարկումներ և ելույթներ քննարկման ենթակա թեմաների ու չորս մոդուլից բաղկացած գործի վերաբերյալ, ներկայացվել է կոռուպցիայի դեմ պայքարում ՀՀ փորձը, ՀՀ-ում առկա իրավիճակը, ՀՀ օրենսդրությունը հակակոռուպցիոն ոլորտում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Աշխատաժողովի ժամանակ որևէ փաստաթուղթ չի ստորագրվել, քանի որ գործուղումը ճանաչողական էր և կազմակերպվում էր շնորհանդեսների և քննարկումների միջոցով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատաժողովի ընթացքում ներկայացված տեղեկատվությունը, ուսումնասիրված միջազգային փորձն օգտակար է և կիրառելի:

Գործուղվող՝
Իրավաբանական վարչության պետական
շահերի պաշտպանության բաժնի
գլխավոր իրավաբան Արևիկ Մարտիրոսյան

29 հոկտեմբերի 2024թ